



ՄՊՀՀ մամլո հաղորդագրություն # 6

ՀՀ, Երևան, 2007թ., օգոստոսի 24

## Աննախադեպ սեմինար՝ նվիրված տարեց և հաշմանդամ անձանց մատուցվող ծառայությունների մատչելիության բարձրացմանը

08/24/07-11:00, Երևան - Այսօր՝ օգոստոսի 24-ին, Երևանում իր ավարտին է մոտենում ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ԱՄՆ ՄԶԳ/Հայաստանի Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացում ծրագրի կողմից կազմակերպված «Տարեց և հաշմանդամ անձանց մատուցվող ծառայությունների մատչելիության բարձրացում» խորագրով եռօրյա սեմինար-հանդիպումը, որը մեկտեղել է ավելի քան 100 սոցիալական աշխատողների Հայաստանի 11 մարզերից՝ այդ թվում բազմաթիվ համայնքներից, մարզպետարաններից, քաղաքապետարաններից և սոցիալական ծառայությունների տարածքային գրասենյակներից:

Մասնակիցների քննարկման կիզակետում է ՀՀ կառավարության 2007թ. ապրիլի 12-ի «Պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների տրամադրման կարգը, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների օգտագործման ժամկետները հաստատելու եւ ՀՀ կառավարության 2003 թ. դեկտեմբերի 24-ի N 1780-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 453-Ն որոշման արդյունավետ կիրարկումը վերոնշյալ սոցիալական ծառայության տեղական մարմինների կողմից:

Ակնկալվում է, որ սեմինարը կնպաստի սոցիալական ծառայության որակի բարելավմանը, ինչպես նաև միջազգայնորեն ընդունված սոցիալական ծառայությունների մատուցման ապակենտրոնացման միտմանը:

2007թ. ապրիլից ուժի մեջ մտած այս որոշումը տարեց և հաշմանդամ անձանց հնարավորություն է տալիս պրոթեզաօրթոպեդիկ սարքերն անվճար ստանալու ուղեգիրը ձեռք բերել անմիջապես իրենց բնակության վայրի սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններից՝ ի տարբերություն նախկինում գործող կարգի, համաձայն որի, մնան սարքեր կարելի էր ստանալ միայն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ուղեգրով:

Նոր կարգի շնորհիվ տարեց և հաշմանդամ անձանց հնարավորություն է ընձեռվում անհրաժեշտ աջակցությունը և սոցիալական ծառայությանը վերաբերող ուղղորդում, ուղեգրում և խորհրդատվություն անմիջականորեն ստանալ իրենց բնակության վայրի սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններից: Այն նաև նպաստում է, որ այս խոցելի խմբերին տրամադրվող աջակցության որակը, հասանելիությունն ու արագությունը զգալիորեն բարձրանան:

Ինչպես նշեց ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Հաշմանդամների հիմնահարցերի բաժնի պետ տկն. Կարմեն Պետրոսյանն իր խոսքում՝ սոցիալական ծառայությունների մատուցման նոր քաղաքականության շնորհիվ տարեց և հաշմանդամ անձինք այլևս կունենան օրենքով սահմանված իրենց իրավունքը, այն է՝ ստանալ համապատասխան ուղղորդում տեղական մակարդակում:

Սեմինարի մասնակից «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը նախագահ տկն. Հռիփսիմե Կիրակոսյանն ընգծեց, թե որքան կարևոր է անհատական մոտեցման դրսևորումը խոցելի խմբերի նկատմամբ և որքան հրատապ է համայնքաին սոցիալական ծառայությունների զարգացումը ողջ հանրապետությունում:

###



ԱՄՆ ՄԶԳ Հայաստան, ՄՊՀՀ ծրագիրը 2007-2011թթ. ընթացքում հանրապետությունում աջակցելու է սոցիալական ոլորտի բարեփոխումների երկրորդ փուլի իրականացմանը: Ծրագրի նպատակն է ամրապնդել Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգերը, բարելավել կառավարական գործընկերների ինստիտուցիոնալ հնարավորությունները, ընդլայնել սոցիալական ծառայություններ տրամադրող հասարակական կազմակերպությունների կարողությունները: